Ինքը, Արթինը, ոտքի վրայ, անդադար պտտւում էր քարաւանի մէջ, իւրաքանչիւրի առողջութիւնը հարցնում էր, իւրաքանչիւրի դրութեան մասին տեղեկացնում էր, արդեօք նրան պէտք չէ՞ր մի որեւիցէ բան եւ, իւրաքանչիւրին մի հաճոյական խօսք ասելով, հեռանում էր: Ամէն կողմից նրան հրաւիրում էին, բայց նա շնորհակալութեամբ հրաժարւում էր, ասելով, որ կատարելու դեռ շատ գործեր ունի:

Ես եւ Ասլանը, գետի ափի մօտ նստած, հեռուից լսում եւ դիտում էինք՝ ինչ որ կատարւում էր: Այդ միջոցին մօտեցաւ մեզ Արթինը եւ իր սովորական զուարճախօսութեամբ ասաց.

— Պարոն բժշկապետ, եթէ չէք կամենում քաղցած մնալ, շնորհ բերէք իմ վրանը, ինչպէս երեւում է, դուք ուտելու ոչինչ չէք վերառել ձեզ հետ:

Եւ իրաւ, մենք այդ մասին ամենեւին չէինք մտածել, կարծելով, թէ քարաւանը բնակութիւնների մէջ կիջեւանէ եւ այնտեղ ամէն ինչ կարելի կը լինի գտնել. թէեւ այդ կողմերի գիւղերում, բացի գարիի ալիւրից պատրաստած հացից եւ ձուաներից, ուտելու ուրիշ ոչինչ բան չէ կարելի գտնել:

Ասլանը կարծես Արթինի հրաւէրքին էր սպասում, շնորհակալութիւն յայտնելով, հետեւեց նրան:

Ջորեպանի սպիտակ վրանը այնքան ընդարձակ էր, որ նրա մէջ կարող էին տեղաւորուել մի քանի ընտանիքներ: Նա զուրկ չէր եւ շքեղութիւնից: Երեւում էր, որ այդ «անապատի մարդը», ինչպէս ինքն իրան կոչելու սովորութիւն ունէր Արթինը, սիրում էր փոքրիկ վայելչութիւններ: Երբ կատակի համար այդ մասին նկատեցի, նա պատասխանեց.

— Օրհնած, երեսուն տարի է, որ տան ծածկի տակ չեմ մտել, իմ անասունների հետ միշտ ձորերում, լեռներում, անապատների մէջ եմ կեանք վարել եւ իմ մխիթարութիւնը միայն այդ վրանի մէջ եմ գտել:

Արթինը դժբախտ էր եւ որպէս ամուսին. կնոջը անհաւատարմութեան համար արձակեց, իսկ նրանից ծնած միակ որդին մեռաւ ծաղիկ հիւանդութիւնից: Այնուհետեւ նա վճռեց չամուսնանալ, միշտ ատելով կանանց, թէ «նրանք մի դառն պատիժ են տղամարդի համար», եւ իր բոլոր սէրը դարձրեց իր ջորիների վրայ:

— Բայց պէտք է գիտենաք, — ասաց նա, շարունակելով իր առաջին խօսակցութիւնը, — որ այդ վրանը ոչ այնքան ինձ համար է, որքան իմ ուղեւորների համար: Տօթի եւ անձրեւի ժամանակ շատերը այստեղ պատսպարան են գտնում:

— Ինչպէս մենք, — ընդմիջեցի ես: — Եւ դուք ամէնին կերակրո՞ւմ էք: